

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ, զգեցեալ պատմութեան սպիտակ, եւ զարհուրեցան: Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛ երկն- չիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ, չէ աստ. ահաւաղիկ տեղին ուր եղին զնա»:

(Մարկոս ԺԶ:5-6)

Զատկական Կիրակի առաւօտ, երբ Իւղաբեր Կիները իրենց Տիրոջ գերեզմանը կ'երթային, անոնք լաւ գիտէին թէ ի՞նչ կը սպասէր իրենց. աւելի ճիշդ, կը խորհէին թէ գիտէին, որովհետեւ անոնք կ'երթային գերեզման՝ անուշահոտ իւղերով օծելու մեռած մարմինը իրենց սիրեցեալ Վարդապետին եւ Տիրոջ: Բայց մենք լաւ գիտենք թէ այդ Կի- ները ի՞նչ պիտի գտնէին հոն. թափուր գերեզման մը: Անոնք սակայն, իրենց մտքին մէջ կ'երթային հրէական օրէնքներու համաձայն մեռած մարմին մը օծելու: Անոնք կ'եր- թային ոչ թէ ապրող Մէկը տեսնելու, այլ անշունչ մարմին մը:

Մեզմէ շատեր այդ Կիներուն պէս կեանքին կը մօտենան նոյն ձեւով, իւրաքան- չիւր օր ուրիշ օր մըն է մեզի համար գերեզմանին մօտեցող: Նման այդ Իւղաբեր Կիներ- րուն, որոնք իրենց Տիրոջ մահուան պատճառով կը քալէին արշալոյսի մառախուղին մէջ, մենք եւս կը քալենք մեր կեանքի մառախուղին մէջ:

Իւղաբեր Կիները այդ առաւօտ կ'երթային իրենց Վարդապետին գերեզմանը մահ տեսնելու, սակայն Միաշաբաթի այդ առաւօտ անոնք ուրիշ բան մը պիտի գտնէին հոն: Երբ անոնք Յիսուսի գերեզմանը հասան, տեսան թէ գերեզմանին իբր դուռ ծառայող քարը գլորած էր, եւ իրենց Վարդապետին մարմինը անյայտացած, բան մը որ պիտի գար զիրենք վախի ու շուարած կացութեան մատնելու: Յանկարծ լուսագեղ, շլացուցիչ զգեստներով երկու հրեշտակներ կը յայտնուէին, բան մը որ այդ Կիները աւելի պիտի վախցնէր ու ծունկի բերէր: Ապա հրեշտակները ըսին. «Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռել- ներուն մէջ, չէ՞ք յիշեր որ ըսաւ, թէ ինք թէեւ պիտի մեռնէր, սակայն երեք օրեր ետք յարութիւն պիտի առնէր»: Միայն ատկից ետք էր որ այդ Կիները պիտի անդրադառնա- յին թէ իրենց Տէրը՝ Յիսուս՝ յարութիւն առած էր, որմէ վերջ անոնք պիտի վերադառ- նային առաքեալներուն, ըսելով. «Ան կ'ապրի»: Իւղաբեր Կիները տակաւին կ'ողբային մահը իրենց վարդապետին, երբ յանկարծ դէմ առ դէմ կու գային անոր Յարութեան: Աստուածային հզօր ոյժը իջած էր մեռելներու աշխարհ եւ յարութիւն տուած էր Միա- ծին Զաւակին:

Նախ գլորած քար մը, ապա թափուր գերեզման մը, յայտնութեամբ զոյգ մը լուսա- գեղ հրեշտակներու, որուն կը յաջորդէր մեռելներու թագաւորութեան մէջ այդ ցնցող լուրը Աստուածորդուն յարութեան, որ այդ օրուրնէ ետք մուտք կը գործէր հաւատա- ցեալներու կեանքէն ներս, նման այդ Իւղաբեր Կիներուն, որոնք կու գային մեռած մար- մին մը տեսնելու, սակայն ատոր փոխարէն կը գտնէին նոր կեանք: Միաշաբաթի այդ առաւօտ Հայր Աստուած մուտք կը գործէր հաւատացեալներու կեանքէն ներս, նման այդ Իւղաբեր Կիներուն, որոնք սակայն մեռած մարմնի մը փոխարէն կեանք պիտի գըտ- նէին այդ գերեզմանին մէջ: Զատկուայ այդ առաւօտ Աստուած էր որ մուտք կը գործէր

մեր այս մեռած աշխարհը, նոր իմաստալից կեանքով: Տակաւին մինչեւ այսօր Հայր Աստուած մոտք կը գործէ մեր մեռած կեանքերէն ներս, Քրիստոսով յաւիտենական կեանքի բարի ու մխիթարիչ լուրով:

Իւղաբեր Կիները սիրով եւ մեծ ուրախութեամբ առին հրեշտակներուն տուած լուրը, թէ «Ձէ աստ, այլ յարեալ, որպէս ասացն»: Անշուշտ առաքեալները նախ պիտի չհաւատային, մինչեւ որ Պետրոս Առաքեալ ինք անձամբ երթար իր Տիրոջ գերեզմանը եւ համոզուած վերադառնար թէ իրմէ առաջ Քրիստոսի գերեզմանը գացած կիներուն պատմութիւնը բարբաջանք կամ երեւակայական խօսքեր չէին: Սովորաբար մարդ արարածը կը մերժէ ընդունիլ գէշ լուրը, սակայն այս մէկը ի վերջոյ ուրախ եւ կարեւոր լուր մըն էր: Հաւանաբար առաքեալները կը սպասէին որ մէկը արթնցնէր զիրենք, ըսելով թէ ինչ որ տեսած էին վատ երազ մըն էր, վերջապէս, ո՞վ կրնար հաւատալ այդ օրերուն թէ մեռելներ կրնային դուրս գալ իրենց գերեզմաններէն, եւ թերեւս ալ անոնք այդ վերագրեցին Իւղաբեր Կիներու երեւակայութեան: Եւ դժբախտաբար մինչեւ այս օրս կան շատեր, որոնք կը մերժեն ընդունիլ Քրիստոսի իրենց պարգեւած նոր կեանքը, որովհետեւ այս աշխարհին մէջ իրենց միակ գիտածացը՝ մահն է, ո՛չ միայն ֆիզիքական՝ այլ հոգիին մահը, զիրենք շրջապատող խաւարն ու տիեզերական առանձնութիւնը, մինակութիւնը:

Յիսուսի մեռելներէն յարութեան ամենահամոզիչ փաստը, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, իր յուսախաբ աշակերտներուն վրայ թողած տպաւորութիւնն էր: Տակաւին քառասուն եւ ութ ժամեր առաջ էր, որ անոնք կը լսէին իրենց վարդապետին վերջին խօսքերը, «Ամենայն ինչ կատարեալ է», «Ամէն ինչ վերջացաւ», սակայն շաբթուան առաջին օրն իսկ, երեկոյեան, Էմմաուսի ճամբուն վրայ անոնք կու գային լսել իրենց յարուցեալ Տիրոջ խօսքերը. «Ես եմ, մի՛ վախնաք»: Հերովդէս ի զուր կը փորձէր ոչնչացնել Քրիստոսի հետեւորդները: Փարիսեցի Սաւուղը - Պօղոս Առաքեալ - ոգի ի բռին փորձեց իր պատեանին մէջ խեղդել առաջին դարու քրիստոնէութիւնը: Հոռմի կայսրերը նոյնիսկ ձախողեցան իրենց փորձերուն մէջ ճգմելու նոր կրօնքը: Յետոյ, Քրիստոնէական եկեղեցւոյ շարունակականութիւնը ինքնին պիտի գար անոր յարութեան ամենագորաւոր փաստերէն մին ըլլալու, ու երկու հազար տարիներէ ի վեր ոչ մէկ ոյժ կրցած է յաղթահարել զայն, ընդհակառակը՝ ցայսօր ամէն Զատիկի, միլիոնաւոր մարդիկ իրար կ'ողջունեն ըսելով. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Աւագ Ուրբաթ օրով Քրիստոս խաչուեցաւ մարդկութեան կողմէ. իսկ Աւագ Շաբաթ օր ամբողջ տիեզերքը շնչահեղձ կը սպասէր. սակայն այդ հոյակապ Զատիկական առաւօտուն Անոր յարութիւնը կու գար միանգամ ընդմիշտ հաստատելու թէ մահը վերջնականապէս յաղթահարուած էր: Քրիստոսի մեռելներէն ետդարձը մարդկութեան կը բերէր նոր յոյս, նոր կեանք եւ յիշատակելի նոր օր մը, եւ Յիսուսի հրաշափառ Յարութեամբ Աւագ Ուրբաթ օրուան խաւարը վերջնականապէս կը փարատէր:

Սովորական օրեր մենք մահուան կը նայինք եւ կ'արտայայտուինք իբր դժբախտութիւն կամ ողբերգութիւն մը, սակայն Զատիկի օրով ան քրիստոնեային համար կը դառնայ յաղթանակի օր մը: Սովորական օրեր մենք մահուան մասին կը խօսինք փսփսուքով, վախով, որովհետեւ ան իր հետ կը բերէ անհատնում վիշտ եւ ցաւ, սակայն Զատիկի օրով քրիստոնեան, մանաւանդ Հայը, որ առաւելագոյնս ճաշակած է մահուան սարսափն ու դառնութիւնները, կու գան հաստատելու թէ յաղթանակը կեանքին է, Քրիստոսով եղած կեանքին. մահը կրնայ հարուածել մարմինը, սակայն երբեք հոգին, որովհետեւ «Հոգին է կենդանարար»: Մեզմէ ոմանց համար կեանքը ամենօրեայ պայքար է ու կռիւ,

սակայն Ձատիկը, Քրիստոսի յարութեամբ կու գայ մեզի տալու հոգեկան ոյժ, յոյսի նշոյլ մը որուն միջոցաւ մենք պիտի յաջողինք յաղթահարել մեր դէմ ծառացող բոլոր դժուարութիւնները: Եւ վերջապէս ի՞նչ բանի շուրջ կը դառնայ Ձատիկը, եթէ ոչ յոյսի եւ վերածնունդի, եւ խորհրդածութեան մեր կեանքերու մասին: Մեր Փրկչին Յարութիւնը յոյսի անհատնում աղբիւր մըն է ու միաժամանակ կեանքին նայելու նոր իմաստասիրութիւն մը, զոր պարտինք միշտ տանիլ մեր հետ ո՛չ միայն Ձատիկին, այլ նաեւ տարւան մնացած միւս բոլոր օրերուն:

Ձատիկը սիրելիներ, այսպէս ըսած փարատոքս մըն է, որ կը միացնէ կեանքի եւ մահուան հակասութիւնները: Մեր մարդկային փորձառութեամբ ու հասկացողութեամբ մահը կ'անճիտէր, չեղեալ կը նկատէր կեանքը, մինչ Ձատիկը կու գար մեզի վերջիշեցնելու թէ կեանքը եւս կրնար իր կարգին անճիտել մահը, որովհետեւ մեր Փրկիչը իր կեանքով յաղթեց մահուան: Յարութիւնը այլաբանութիւն մը չէ, այլ իրականութիւն մը, ան այլեւս ընդմիշտ պատռած է մահուան վարագոյրը, եւ իրար միացուցած կեանքը՝ անմահութեան եւ ժամանակաւորը՝ անժամանակին: Աստուածորդին մեռաւ եւ յարութիւն առաւ մեզի համար, միայն մեզի սորվեցնելու որպէսզի մենք եւս կարենանք յարութիւն առնել իրենց պէս մեր կեանքի դժուարութիւններէն եւ ձախողութիւններէն պարտինք գիտնալ եւ կարենալ մեռնիլ իրեն պէս:

Ձատիկը, սիրելի հաւատացեալներ, կոչ մըն է ուղղուած մեզի, վերակենդանացնելու մեր մեռած կեանքերը: Սիրելի հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, ձեր ամբողջ էութեամբ եւ ի բոլոր սրտէ հաւատացէք մեր Փրկչի Յարութեան, ո՛չ միայն իբր պատմական դէպք մը կամ իրողութիւն մը, այլ մեր կեանքերէն ներս իբր ներկայ, ապրող իրականութիւն մը: Եւ երբ ի բոլոր սրտէ կը հաւատաք, ապա մեր Փրկչին Յարութեան զօրութիւնը պիտի փոխէ ձեր կեանքերը եւ յետ այդու ձեր գերեզման այցելութիւնները, նման Իւղաբեր Կիներուն, պիտի չըլլան պարզ այցելութիւն մը տրուած սիրելի ննջեցեալներու եւ կամ անոնց յիշատակին, այլ ատկից ետք դուք պիտի սկսիք շրջիլ ձեր սիրտերը լեցուն Աստուծոյ սիրով, գերերջանիկ, նոր կեանքով:

Սիրելիներ, ի բոլոր սրտէ հաւատացէ՛ք Ս. Ձատիկուայ հրեշտակներու տուած բարի լուրին, «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեաւ որպէս ասացն: Ինչո՞ւ ողջը կը փնտռէ մեռելներուն մէջ, հոս չէ, այլ յարութիւն առաւ»: Այս առաւօտ դուք եւս գացէք եւ այդ հրեշտակներուն նման ձեր սիրելիներուն տուէք Հայր Աստուծոյ սիրոյն բարի լուրը, Իր Միածին Ձաւկին Յարութեան աւետիսը, ըսելով թէ Ան կ'ապրի եւ պիտի շարունակէ կեանք տալ բոլոր անոնց՝ որոնք կը հաւատան իրեն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

**Ձեզ և Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Յարեալ ի Մեռելոց:**